ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ РЕЦЕНЗИИ

LA CILICIE AU CARREFOUR DES EMPIRES par Claude Mutafian, tome I, tome II: tableaux, atlas, iconographie, réferences, bibliographie, index. Paris: Société d'édition „Les belles Lettres", 1988, p. 478+436.

ԿԼՈԴ ՄՈՒԹԱՖՅԱՆ, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում. հհ. I, II, Փարիզ, 1988, էջ 478+436։

Փարիզի «Les delles Lettres» (Գեղարվեստ) հրատարակչությունը 1988 թ. ամռանը անակնկալ մատուցեց հայագիտությանը, հրապարակելով Կլոդ Մութաֆյանի «Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում» մենագրությունը։ Նշված հրատարակչությունը, որը կոչված է ֆրանսիական և միջազգային հասարակության ամենալայն շրջաններին ծանոթացնելու համաշխարհային մշակույթին, շանք չի խնայել կատարելագույնս օգտագործելով տպագրական գործի վերջին նորույթները, ընթերցողի սեղանին դնելու գիտական և գեղարվեստական տեսանկյունից հագեցված մի աշխատություն։ Մենագրության հեղինակը Փարիզի XIII համալսարանի մաթեմատիկայի և երկրաչափության դասախոս է։ Նրա գրչին են պատկանում ճշգրիտ գիտություններին և նրանց պատմությանը վերաբերող մի շարք ուսումնասիրություններ։ Կլոդ Մութաֆյանը ներկա աշխատությամբ ապահովում է իր ուրույն տեղը հայագետ-պատմաբանների բույլում։

Կիլիկիայի հայկական պետության և երկրամասի քաղաքական պատմության գիտական ուսումնասիրությանը դեռևս XVIII դարում սկիզբ դրեց հայ նոր պատմագրության հիմնադիր Միքայել Չամչյանը[1], որը հայ ժողովրդի պատմության համակարգում առաջին անգամ շարադրեց Կիլիկիայի XII—XIV դդ. քաղաքական պատմությունը։ Այնուհետև պոպտումները նոր որակի բարձրացրեցին ֆրանսիացի պատմաբաններ Էդուարդ Դյուլորիեն[2] և Վիկտոր Լանգլուան[3], որոնց ուսումնասիրություններին նոր թափ էր հաղորդել Բարկերի 1853 թ. հրապարակված գիտահանրամատչելի հետազոտությունը[4]։ Ղեոնդ Ալիշանը ընդհանրացրեց իր բոլոր նախորդների հրապարակումները և սեղանին դրեց «Սիսուան» կոթողային մենագրությունը[5], որը մինչև այսօր մնում է որպես անգերազանցելի քննություն հայագիտության և կիլիկիագիտության ասպարեզում։

Կիլիկիա երկրամասի հնադույն ժամանակների պատմությունը Կլոդ Մութաֆյանը շարադրել է հիմնվելով Ե. Ֆոռերի[6], Ա. Էրզենի[7], Թ. Լիբման-Ֆրանկֆորտի[8], Ռ. Սայմի[9] և ուրիշների աշխատությունների վրա։ Հեղինակի ուշադ-

---

[1] *Մ. Չամչյան, Պատմութիւն հայոց. Վենետիկ, հ. Գ, 1786, էջ 5—365։*

[2] E. Dulaurier. Le royaume de Petit-Arménie. Paris, 1862.

[3] V. Langlois. Constitution sociale et politique de l'Arménie sous les rois de la dinastie Roupénienne. Saint-Petersbourg, 1860.

[4] W. B. Barker. Lares and Penates, or Cilicia and its governors, Londres, 1853 *(սակավաթիվ օրինակներով պահպանված այս մենագրությունը Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանին է նվիրել Կլոդ Մութաֆյանը)։*

[5] Ղ. Ալիշան. Սիսուան. համադրութիւն հայկական Կիլիկիոյ և Լևոն Մեծազորի. Վենետիկ, 1885։

[6] E. Forer. Kilikien zur Zeit des Hatti Reiches. Klio (30), 1937.

[7] A. Erzen. Kilikien zum Ende des Persenherrschaft. Leipzig, 1940.

[8] Th. Liebmann-Frankfortf La Provincia Cilicia et son intégration dans l'empire romain.—In: Hommages à Marcel Renard, t. 2, Bruxelles, 1969, p. 447.

[9] R. Syme. Observations on the province of Cilicia, as presented to Buckler. Manchester, 1939.

ությունից չեն վրիպել նաև Կիլիկիայի պատմությանն ու մշակույթին նվիրված եվրոպական և ամերիկյան ուսումնասիրությունները, որոնց երկրամասի այդ ժամանակաշրջանի պատմությունը դիտում են Բյուզանդական կայսրության և խաչակրաց պետությունների պատմության լանախորքի վրա[10]։ Սովետական պատմագրությունը ևս բազմիցս անդրադարձել է Կիլիկիայի սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային պատմությանը, հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության տեսանկյունից[11]։ Այնուամենայնիվ ցայսօր դեռևս չէր հրապարակվել որևէ մենագրություն, ուր քննարկված լինեին երկրամասի պատմության հարցերը սկսած հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը։ Այդ բացը լրացնելու նպատակով է գրված Կլոդ Մութաֆյանի ներկա աշխատությունը, որը բաղկացած է երկու հատորից։ Առաջին հատորում պատմաաշխարհագրական ուսումնասիրությունն է, երկրորդում՝ հեղինակի օգտագործած և կազմած հսկայական դնանական նյութը. սերունդարանական ծառեր, քարտեզներ, ձեռագրերից և հնատիպ գրքերից կատարված լուսանկարներ, գիտական ապարատ և գրականության ցանկ։

Գրքի առաջին գլխում հեղինակն ընդհանուր տեղեկություններ է տալիս Կիլիկիայի պատմության, աշխարհագրական դիրքի, բնական սահմանների, գետերի և մեծ քաղաքների մասին։ Այս և հետևյալ բոլոր գլուխներում ուսումնասիրողն իր ասածը հիմնավորելու համար առատորեն օգտագործում է անտիկ ու միջնադարյան Եվրոպայում և Ասիայում ստեղծված բազմաբնույթ մատենագրական հուշարձանները, հնագիտական պեղումների արդյունքները։ Երկրորդ գլուխը նվիրված է Կիլիկիային առնչվող հունա-լատինական առասպելներին, ուր փորձ է կատարված տեղագրել դիցաբանության մեջ հիշատակվող տեղանունները և թվագրել պատմական առաղձ ունեցող իրադարձությունները։ Կլոդ Մութաֆյանը համաշխարհային պատմագրության մեջ առաջին անգամ մեծ ջանասիրությամբ հավաքել է հունա-լատինական և արևելյան. անտիկ ու միջնադարյան հեղինակների մոտ պահպանված գրեթե բոլոր ավանդազրույցները, որոնցով կարելի է առավել ճշգրիտ տեղորոշել այս կամ այն տեղանունը, կամ բացահայտել ու բացատրել պատմական որևէ իրադարձություն կամ անցուդարձ։ Սկզբնաղբյուրների և հնագիտական նյութի հիման վրա փորձել է վերականգնել բուն կիլիկյան մի շարք աստվածությունների դերը երկրամասի հոգևոր կյանքում և քարտեզի վրա տեղադրել նրանց պաշտամունքի վայրերը։ Աշխատության երրորդ գլխում հեղինակն անդրադառնում է Կիլիկիայի միջով անցնող գլխավոր ճանապարհներին և բերում է սկզբնաղբյուրների վկայությունները մ. թ. ա. V—մ. թ. XII դդ. ընթացքում երկրամասի վրայով դեպի արևելք շարժված բոլոր մեծ ռազմարշավների վերաբերյալ։ Չորրորդ գլուխը նվիրված է հելլենիստական դարաշրջանի Կիլիկիայի պատմությանը. Ալեքսանդր Մակեդոնացու և նրա մահից հետո երկրամասի շուրջ Եվրոպայի և Մերձավոր Արևելքի երկրների միջև ծավալված քաղաքական պայքարին։ Կլոդ Մութաֆյանը մանրամասնորեն քննարկում է սկզբնաղբյուրների վկայությունները Տիգրան Մեծի կողմից Կիլիկիայի գրավման մասին, անդրադառնում է կիլիկյան ծովահենության խնդրին։ Աշխատության հաջորդ գլուխը նվիրված է կիլիկյան Տավրոսին և երկրամասը Կապադովկիայի և արևմտյան Փոքր Ասիայի տարբեր քաղաքների հետ կապող կիրճերին (հիմնականում՝ Կիլիկյան դռներ) և ճանապարհներին, ուր հեղինակն անդրադառնում է մ. թ. I—IV դդ. Հռոմեական կայսրության և Պարթևական պետության, Բյուզանդիայի և Արաբական խալիֆայության միջև ծավալված պատերազմների ընթացքում երկրամասի խաղացած դերին, Օսմանյան կայսրության և Եգիպտոսի միջև XIX դարի 30—40-ական թթ. պատերազմների ընթացքում Կիլիկիայի քաղաքական դերին։ Վեցերորդ գլուխը կոչվում է «Կիլիկիայի արևելյան դռները», ուր հեղինակը պատմաաշխարհագրական տեղեկություններ է հաղորդում արևելյան Կիլիկիայի և այն Կապադովկիայի, Հայաստանի ու Հյուսիսային Ասորիքի հետ կապող ճանապարհների մասին, որոնք անցնում էին արևելյան Տավրոսով և Ամանոսյան (կամ Սև) լեռներով։ Այս գլխում Կ. Մութաֆյանն անդրադառնում է նաև մ. թ. ա. IX—VII դդ. Ասորեստանի կողմից Կիլիկիան նվաճելու պատմությանը։ Նախորդ երկու գլուխներում աշխարհագրական նկարագրություններն ուղեկցվում են պատմական անցուդարձերի առինքնող նկարագրություններով։ Յոթերորդ և ութերորդ գլուխներում շա-

[10] The Cilician Kingdom of Armenia, ed. T. S. R. Boase. Edinburgh—London, 1978; Cl. Cahen. La Syrie du Norde à l'époque des Croisades Paris, 1940.

[11] Г. Г. Микаелян. История Киликийского армянского государства. Ереван, 1952; Լ. Ռ. Ազարյան, Կիլիկյան մանրանկարչությունը XII—XIII դդ. Երևան, 1964։ Ս. Բոռնազյան. Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում XII—XIV դարերում. Երևան, 1973։

ոադրվում է Կիլիկիայում և նրա շուրջ ծավալված քաղաքական իրադրությունը մ. թ. X—XIV դարերում։

Կցանկանայինք ավելի մանրամասնաբար անդրադառնալ աշխատության վերջին երկու գլուխներում արծարծված մի շարք հարցերի։ Սկսած X դարի առաջին տասնամյակներից բյուզանդական բանակները բնակավայր առ բնակավայր վերանվաճում են Կիլիկիայի ողջ տարածքը, իսկ XI դարի երկրորդ կեսին երկրամասում և նրան հարակից շրջաններում հայտնվում են հայկական զինվորական շոկատներ, որոնք ազնվականական ընտանիքների ղեկավարությամբ ժամանակի ընթացքում իրենց ձեռքն են վերցնում երկրամասի կառավարումը։ Այստեղ խոսվում է նաև Կիլիկիայում, Կապադովկիայում և Հյուսիսային Ասորիքում հայկական բնակչության բնակեցման հիմնական փուլերի, երկրամասում Թյուրք-սելջուկ-ցեղի և խաչակիրների հաստատման մասին։ Հեղինակը մանրամասնաբար անդրադառնում է Ռուբինյան հայկական իշխանության ստեղծման և հարևան պետական միավորումների դեմ վարած քաղաքական պայքարի դրսևորումներին։ Կլոդ Մութաֆյանը ներկայացնում է Կիլիկիայի հայկական պետության համար շրջադարձային հիմնական իրադարձությունները. նրա պայքարը Բյուզանդական կայսրության, Իկոնիայի սուլթանության, Դանիշմանյան ամիրայության, Անտիոքի իշխանության, Հալեպ-Մոսուլի աթաբեգության, Այյուբյան սուլթանության, թաթարմանղոլների պետության և Եգիպտոսի մամլուկյան սուլթանության դեմ, ցույց է տալիս այդ անցուդարձերում քրիստոնյա արևմուտքի դերը։ Հեղինակի ողջ ասելիքը համեմված է սկզբնաղբյուրներից բերվող վկայություններով։

Այնուամենայնիվ, երբեմն, Կլոդ Մութաֆյանը գնում է տրորված արահետներով, ահա այստեղ է, որ հեղինակի պնդումների մի մասը անհամոզիչ է հնչում։ Օրինակ՝ Ռուբինյան իշխանության վերականգնումը ուսումնասիրողը իր բոլոր նախորդներին հետևելով թվագրում է 1146 թ. (էջ 393)։ Այստեղ հաշվի չի առնվում այն հանգամանքը, որ Կիլիկիայում հայկական իշխանության վերահաստատման հիմնական ազդակներից մեկը, գուցե և ամենավճռորոշը, երկրորդ խաչակրաց ռազմարշավն էր, որին պետք է ավելացնել նաև այն հանգամանքը, որ սկզբնաղբյուրներում Թորոս II Ռուբինյանի անունը հայտնվում է միայն 1150 թ. հետո[12]։ Ըստ Կլոդ Մութաֆյանի Հովհաննես II Կոմնենոսը ողջ Կիլիկիան նվաճել է 1137 թ. (էջ 388—390), սակայն սկզբնաղբյուրները վկայում են. որ երկրամասի նվաճումը բյուզանդական զորքերն ավարտել են 1138 թ. սկզբին[13]։ 8-րդ գլխում հեղինակը խոսում է միայն Անտիոքի լատինական և Ռուբինյան հայկական իշխանությունների միջև հաստատված քաղաքական ամուսնությունների մասին (էջ 409, 418), սակայն մոռանում է հիշատակել 1214 թ. Լասկարիսների բյուզանդական թագավորական ընտանիքի հետ Լևոն II-ի խնամիական կապ ստեղծելու ջանքերի մասին։

Ուսումնասիրողը մանրամասնաբար անդրադառնում է XII—XIII դդ. հայկական կաթողիկոսարանի դեգերումներին Կապադովկիայում, Մերձեփրատյան տարածքներում և Կիլիկիայում, արդարացիորեն նշում է, որ կաթողիկոսներն ունեին համահայկական ձգտումներ (էջ 373—380, 410—411, 455—456)։ Այնուամենայնիվ, մինչև վերջ չի խոսեցվում բերված փաստական նյութը, ըստ որի XII—XIII դդ. պայքար էր մղվում երկրամասի հոգևոր և աշխարհիկ իշխանությունների միջև։ Աշխարհիկ իշխանությունները և մանավանդ Ռուբինյան իշխանական տունը փորձում էին իրենց ենթարկել Հռոմկլայի կաթողիկոսներին, իսկ վերջիններս ամեն գնով, մինչև 1293 թ. փորձում էին պաշտպանել իրենց ինքնուրույնությունը, հեռու պահելով կաթողիկոսարանը Կիլիկիայի սահմաններից։ Անդրադառնալով Հայոց կաթողիկոսարանը Կիլիկիայում հաստատելու Լևոն I թագավորի ձգտմանը (էջ 410), Կլոդ Մութաֆյանը ընդհանրապես չի անդրադառնում այս հարցերի հետ սերտ առնչություն ունեցող՝ Կիլիկիայի հայոց թագավորի պաշտոնական տիտղոսաշարին։

Հեղինակը մենագրության մեջ առանձին ենթավերնագրերով ներկայացնում է XI դարում Կապադովկիա աքսորված հայկական թագավորական տների ներկայացուցիչների տարածքները, անդրադառնում է նույն դարի վերջում և XII դարի սկզբում Կիլիկիայում և Մերձեփրատյան տարածքներում հաստատված հայկական իշխանական ընտանիքների գործունեությանը (էջ 367—372)։ Այս բաժնում պատկերն ավելի ամբողջական կլիներ, եթե հեղինակն անդրադառնար նաև Լամբրոնի Օշինյանների և Եդեսիայի իշխան Թորոսի

---

12 Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Ա. Ղազոյան. Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30—70-ական թվականներին. Երևան, 1988, էջ 175—184։

13 Սմբատայ Սպարապետի Տարեգիրք. Վենետիկ, 1956, էջ 161։ Ioannis Cinnami Epitome rerum... Bonnae, 1836, p. 18—20.

գործունեությանը։ Մանավանդ, որ վերջինիս սպանությունից հետո էլ հայկական բնակչությունը դեռես որոշիչ դեր ուներ Եդեսիայի խաչակրաց կոմսության կառավարման գործում։ Ուսումնասիրողը մանրամասնաբար անդրադառնալով XIII դարի 20—30-ական թթ. Փոքր Ասիայում և Հյուսիսային Ասորիքում ստեղծված քաղաքական իրադրությանը (էջ 417, 421), աչքաթող է անում Իկոնիայի սուլթաններ Քայքուբադ I-ի և Քայխոսրով II-ի և Հեթում I-ի երկլեզվյան դրամները[14], որոնք հնարավորություն են տալիս ճշտել Կիլիկիայի և Իկոնիայի փոխհարաբերությունների բնույթը։

Գրքում տեղի սղության և թեմաների բազմազանության պատճառով քիչ ուշադրություն է հատկացված Կիլիկիայի հայկական թագավորության պետական սահմաններին, տնտեսական և առևտրական կապերին։ Սակայն նշված փաստերը երբեք չեն նսեմացնում այն հսկայածավալ, կոթողային աշխատանքը. որով Կլոդ Մութաֆյանը իր ավանդն է բերում Կիլիկիայի հայկական թագավորության պատմության ուսումնասիրության բնագավառում։

Ինչպես տեսանք, Կլոդ Մութաֆյանը Կիլիկիա երկրամասի պատմությունը և աշխարհագրությունը դիտել է համաշխարհային մշակույթի և իրադարձությունների ետնախորքի վրա, ցույց տալով երկրամասի նշանակությունը և դերը քաղաքակրթության զարգացման գրեթե բոլոր շրջադարձային փուլերում։ Այս իմաստով մենագրությունը ամփոփում է Կիլիկիա երկրամասի մասին մեր ունեցած գիտելիքները և նոր ուղիներ է մատնանշում Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան ելուստի պատմության ապագա ուսումնասիրողների համար։

Ա. Ա. ԲՈՋՈՅԱՆ

---

[14] Y. T. Nercessian. Attribution and dating of Armenian bilingual Trams (Armenian Numismatic Society. Special Publication, № 2). Los Angeles, 1983.

Արաբական աղբյուրները հայկական ցեղասպանության մասին. կազմող Ռուբեն Պողոսյան, *Բեյրութ, 1988, 141 էջ (Արաբերեն)։*

Վերջին տարիներին արաբական երկրներում առանձնահատուկ ուշադրություն է դրսևորվում մասնավորապես դարասկզբին արևմտահայության ապրած ողբերգության նկատմամբ։ Բավական է նշել, որ արաբական Արևելքի տարբեր քաղաքներում լույս տեսած հայագիտական գրեթե բոլոր հրատարակություններում, ինչպես նաև մամուլի էջերում ըստ էության արծարծվում է Հայկական հարցը Թուրքիայում՝ Օսմանյան կայսրության հակահայկական ավանդական քաղաքականությունը, արևմտահայության զանգվածային կոտորածները, հալածանքները և այլն[1]։ Դրա հետ մեկտեղ խիստ շահեկան և օգտակար աշխատանք է կատարվում հայկական ցեղասպանության ականատեսների հուշերը, պաշտոնական այլևայլ փաստաթղթերն ու նյութերը արաբ ժամանակակից ընթերցողների դատին ներկայացնելու ուղղությամբ։ Այդ երախտաշատ գործը մեծապես օգնում է արաբ մտավորականությանը՝ ճշմարիտ պատկերացում կազմելու հայ ժողովրդի դառը ճակատագրի, ոչ հեռավոր ողբերգական անցյալի և պատմական իրադարձությունների մասին։

1988 թ. այդպիսի շնորհակալ մի փորձ ձեռնարկեց Հալեպի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի դասախոս, դոկտոր Ռուբեն Պողոսյանը՝ արաբ ընթերցողների սեղանին դնելով «Արաբական աղբյուրները հայկական ցեղասպանության մասին» խորագրով հուշերի և փաստաթղթերի ժողովածուն։ Ի դեպ, դա վերջին երկու-երեք տարիներին արաբական Արևելքում սկսված այդ կարգի աշխատանքների երկրորդ գործն է։ 1986 թ. Բեյրութում նման մի ժողովածու («Հայկական կոտորածներ, վկայություններ և փաստաթղթեր» խորագրով) հրատարակեց սփյուռքահայ մշակութային առաջադեմ գործիչ Գարույր Երիցյանը։

Ժողովածուն լույս է տեսել Բեյրութում և բաղկացած է կազմողի նախաբանից և չորս

---

[1] Ավելի մանրամասն տե՛ս Ն. Հ. Հովհաննիսյան. Սուլթան Աբդուլ Համիդ II-ի հակահայկական քաղաքականությունն արաբական ժամանակակից պատմագրության մեջ. «Պատմա-բանասիրական հանդես», 1987, № 1, էջ 75—88։ Նույնի՝ Հայերի 1915 թ. ցեղասպանության լուսաբանությունը արաբական պատմագրության մեջ.— Նույն տեղում, 1989, № 1, էջ 25—34։